ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1400: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

ՈՒՐԲԱԹ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016Թ.
№ 34 (410)

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Աշխատենք միասին՝ վեր անձնական շահերից...

Աղասի Հակոբջանյան

Հարցազրույց
էնտրությունների առիթով

ԱՂԱՍԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ.

«Համաքաղաքացիներիս հետ եղել եւ մնում եմ անկեղծ, ինչի համար եւ ակնկալում եմ նրանց վստահության քվեն»

Խոսք ընտրողին

Սիրելի՛ սիսիանցիներ
Ավարտին է մոտենում մի ընտրական ժամանակաշրջան եւս, որը կրկին առաջացուցում է, որ մեր քաղաքի, մեր համաքաղաքացիների հոգսերին ու մտահոգություններին լուծում տալը եղել է եւ կա իմ ու իմ թիմակիցների աշխատանքի հիմնական թիրախը, գործունեության գլխավոր նպատակը: Չնայած համայնքային սուղ միջոցներին եւ հանրապետությունում առկա ֆինանսական շարունակվող ճգնաժամին՝ մեզ հաջողվել է իրականություն դարձնել քառամյա ծրագրով նախատեսված աշխատանքների գերակշիռ մասը՝ բոլոր հիմնական ուղղություններով: Արմատական բարեփոխումներ են իրականացվել համայնքի փողոցների բարեկարգման, լուսավորության, աղբահանության ուղղությամբ, որակապես նոր մակարդակի է հասցվել մեր համաքաղաքացիների, առավելապես երիտասարդության հանգստի կազմակերպումը, լուրջ ձեռքբերումներ ունենք մշակութային կյանքի զարգացման ուղղությամբ: Այս եւ համայնքային խնդիրների համալիր լուծումն այսուհետ եւս մեր թիմի հետեւողական աշխատանքն են պահանջում, որը, լիահույս եմ, մենք իրականություն կդարձնենք մեր համատեղ շահագրգիռ աշխատանքի շնորհիվ:
Սիրելի՛ հայրենակիցներ
Հանուն մեր քաղաքի հետագա բարգավաճման, հանուն սիսիանցու արժանապատիվ ապագայի մասնակցի՛ր հոկտեմբերի 2-ի ընտրություններին: Վստահեցնում եմ, որ ձեր ճիշտ ընտրությամբ կնպաստեք համայնքային խնդիրների ասպիճանական լուծմանը, սիսիանցու կյանքի որակի բարելավմանը:
Բոլորս դեպի ճիշտ ընտրություն:
Միշտ ձեր կողքին՝
ԱՂԱՍԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

Հարցազրույց Ցեղասպանության տարելիցի սիրելի

ԱՂԱՍԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ.

«Համաքաղաքացիներիս հետ եղել եւ մնում եմ անկեղծ, ինչի համար եւ ակնկալում եմ նրանց վստահության քվեն»

Սիսիանում տիրող նախընտրական մթնոլորտի, համայնքում առկա խնդիրների, վերջին տարիներին իրականացված աշխատանքների մասին է զրույցը Սիսիան համայնքի ղեկավարի թեկնածու, գործող քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի հետ:

ԱՅՑԵՔԱՐՏ

ԱՂԱՍԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ
Ծնվել է 1958թ. հունվարի 1-ին ՀՀ Սյունիքի մարզի Տոլորս համայնքում:
1964-1972թթ. սովորել է Տոլորսի ութամյա դպրոցում, այնուհետեւ՝ մինչեւ 1974թ.՝ Սիսիանի N1 միջն. դպրոցում:
1974-1975թթ. աշխատել է Սիսիանի N 6 գյուղշինտրեստում՝ բանվոր:
1975-1980թթ. սովորել է Երեւանի Կ.Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում, ավարտել ինժեներ-էլեկտրիկի որակավորմամբ:
1980-1982թթ. աշխատել է Հայգյուղտեխնիկայի Սիսիանի արտադրական միավորման ինժեներ: Այնուհետեւ՝ 1982-1983թթ. եղել է տեղամասի պետ Սիսիանի մելիորատիվ կայանում, 1983-1984թթ.՝ դարձյալ Հայգյուղտեխնիկայում՝ բրիգադավար:
1984-1986թթ. աշխատել է էներգահսկողության Սիսիանի տեղամասի պետ: 1986-1992թթ. եղել է Սիսիանի էլցանցի, 1992-1996թթ.՝ Սիսիանի շրջանային կապի հանգույցի տնօրենը, 1996-2008թթ.՝ «Արմենտել» ՓԲԸ Սիսիանի տարածքային բաժնի պետը:
2008 թվականից մինչ օրս Սիսիան համայնքի ղեկավարն է:
Ամուսնացած է, ունի մեկ որդի, երեք դուստր, երկու թոռնիկ:
Անկուսակցական է:

Պարո՛ն Հակոբջանյան, երկու ընտրաշրջան ղեկավարել եք Սիսիան քաղաքը՝ այդ ընթացքում բավականին շատ հարցերի լուծում տալով: Հոկտեմբերի 2-ին կայանալիք ՏԻՄ ընտրություններում կրկին հավակնում եք ղեկավարել համայնքը. ինչո՞ւ եք ցանկանում բավականին դժվարին եւ պատասխանատու այս ժամանակներում վերստին ստանձնել համայնքապետի պաշտոնը:

– Ծնվել եւ մեծացել եմ Սիսիանում, գիտակցական կյանքս այստեղ անցկացրել, այս միջավայրում թրծվել, ուստի, անկախ ներկա մարտահրավերներից եւ դժվարություններից, ես սիրում եմ Սիսիանը եւ սիսիանցիներին ու իրենց հետ համատեղ կարող եմ յուրաքանչյուր հարց լուծել: Առհասարակ քաղաքապետարանի աշխատանքները շարունակական են, այն, ինչ խոստացել ենք մեր նախընտրական եւ քառամյա ծրագրերով, դեռ մի բան էլ ավելին, իրականացրել ենք: Բայց կան աշխատանքներ, որոնք անընդհատ պետք է կատարել, ուստի ես ոչ թե հայտարարում եմ, որ դեռ շատ անելիքներ ունենք, այլ պարզապես նշում եմ, որ ցանկություն եւ ներուժ ունեմ ժողովրդի բարեկեցությանը միտված բազում աշխատանքներ կատարելու, օգտակար լինելու մեր հանրությանը:

– Նախորդ ընտրություններում Դուք ներկայացել եք որպես Բարգավաճ Հայաստան բավականին ազդեցիկ կուսակցության անդամ: Այսօր, քաղաքական ինչ-ինչ պատճառներից ելնելով, անկուսակցական եք: Ստացվում է, եթե երեկ կուսակցական հենարան ունեիք, այսօր չունեք: Եվ, այնուամենայնիվ, ո՞րն է Ձեր սոցիալական, քաղաքական հենարանը:

– Քաղաքական որոշ հանգամանքներից ելնելով՝ Բարգավաճ Հայաստան կուսակցության շարքերից հեռացել եմ, այս պահին չեմ հավակնում որեւէ կուսակցության անդամ լինել, համագործակցում եմ տարբեր կուսակցությունների եւ հկ-ների ներկայացուցիչների հետ՝ պահպանելով համերաշխ եւ գործնական հարաբերություններ: Եկել եմ համոզման, որ բնավ պարտադիր չէ կուսակցության անդամ լինել ընտրություններում հաղթող ճանաչվելու համար: Համայնքապետին վստահության քվե տվողը սիսիանցին է: Նախորդ ընտրություններում բավականաչափ քվեներ ստանալս բնավ պայմանավորված չէր կուսակցության անդամ լինելով: Իհարկե, ցանկալի է կուսակցական հենարան ունենալը, բայց ստեղծված իրավիճակում, կարծում եմ, իմ քաղաքական հենարանը ժողովուրդն է, իսկ այցեքարտս՝ իմ կատարած աշխատանքը: Հենարանս այն սիսիանցին է, ով գնահատել գիտի, ճանաչում է ինձ ու իմ գործելակերպը, վստահում է իմ ազնվությանն ու հետագա արդյունավետ գործունեությանը: Սիսիանում ստեղծված պայմաններում, համոզված եմ, բոլոր կուսակցություններից էլ ինձ վստահության քվե կտան, որովհետեւ անցած տարիներին համագործակցել եմ կուսակցական բոլոր առողջ ուժերի, հանրության բոլոր խավերի հետ:

– Սիսիանում քաղաքական հակառակորդներ ունե՞ք:

– Բնականաբար, ունեմ. եթե ութ տարի ղեկավարում ես մի համայնք, ուզես թե չուզես, քաղաքական բեւեռներ ձեւավորվում են՝ պայմանավորված թե՛ տնտեսական, թե՛ գաղափարական, թե՛ անձնական հանգամանքներով: Երեւույթը բնական պրոցես եմ համարում. իհարկե, Սիսիանում կան մարդիկ, ովքեր դեմ են իմ քաղաքական հայացքներին, իմ գործելաոճն իրենց չի բավարարում, իմ հարաբերությունները ժողովրդի հետ իրենց համար խորթ են:

– Գործող քաղաքապետ եք ու նախընտրական պրոցեսում ունեք ե՛ւ առավելություններ, ե՛ւ խոցելի կողմեր: Խոցելի այն առումով, որ պաշտոնի բերումով իրավիճակի պատասխանատուն եք: Բայց մինչ խոցելի կողմերին անդրադառնալը համառոտ ամփոփեք անցած տարիներին կատարված աշխատանքները, որոնց շնորհիվ նաեւ Սիսիանի պատմության էջերում կգրվի Ձեր անունը:

– Այս տարիներին բնավ նպատակ չեմ ունեցել պատմության մեջ տեղ գտնելու, կամ որ իմ տղան պարծենա, թե քաղաքապետի որդի է: Նախ՝ իմ անմիջականության, անկեղծության շնորհիվ հասա նրան, որ վերացավ քաղաքապետարանի եւ ժողովրդի միջեւ առկա անջրպետը: Այնուհետեւ՝ ձեռքբերումները բազմաթիվ են, կատարված աշխատանքները՝ տեսանելի բոլորի համար. այսօրվա Սիսիանն այլեւս նման չէ նախորդ ժամանակների Սիսիանին: Բավականաչափ աշխատանքներ են իրականացվել թե՛ փողոցների ասֆալտապատման ու լուսավորության, թե՛ մայթերի բարեկարգման, թե՛ քաղաքի կանաչապատման ու շենքերի տանիքների նորոգման ուղղությամբ: Զգալի հաջողություններ ենք գրանցել մշակութային եւ մարզական ոլորտներում, լայնացրել երիտասարդների հետ համագործակցության շրջանակները, ուշադրության

13 հոկտեմբերի 2015թ., Սիսիան այցելած Սերժ Սարգսյանը համայնքի ղեկավարի հետ քննարկում է Սիսիանին առնչվող հարցեր

ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Դարգարոյց ճիսարությունների տարեմուտ

կենտրոնում պահել վետերաններին, քաղաքի նշանավոր մարդկանց: Իսկ կատարած աշխատանքներն առավել ընդարձակ հաշվետվությամբ մշտապես ներկայացրել ենք հանրությանը, աշխատել թափանցիկության եւ բացախոսության պայմաններում:

– Ո՞րն է թույլ տրված այն բացթողումը, եթե, իհարկե, այդպիսին կա, որ կրկին համայնքապետ ընտրվելու դեպքում թույլ չեք տա:

– Իհարկե, բազում բացթողումներ կան՝ օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված: Օբյեկտիվ պատճառները կապված են մեր երկրի սոցիալ-տնտեսական վիճակով, սուբյեկտիվ պատճառը՝ քաղաքապետարանում թիմի ձեւավորման հետ: Իմ՝ կառավարման ոլորտներին ու ենթակառույցներին՝ կոմունալ, մշակութային եւ այլն, ծանոթանալը մի փոքր երկար տեւեց:

> *Որոշակի բացթողումներ ղեկավարման առաջին շրջանում ունեցել եմ կադրերի փոփոխության եւ նշանակման հարցերում, բայց կարճ ժամանակում հարթվել են: Այժմ ունեմ բավականին կիրթ եւ փորձառու թիմ, որի հետ համայնքի զարգացմանը միտված բավականաչափ աշխատանքներ ենք իրականացրել:*

Իմ գործունեությանը խանգարում են նաեւ կառավարման համակարգի որոշ առանձնահատկությունները. իբրեւ քաղաքապետ՝ իմ գործողություններում ազատ եմ, բայց մարզային, հանրապետական, մունիցիպալ կառույցների հետ աշխատանքները երբեմն չեն գոհացնում, ինչն անհարկի դժվարություններ է ստեղծում եւ կոնֆլիկտների առիթ տալիս: Սա լուրջ խնդիր է ոչ միայն Սիսիանի, այլեւ ողջ հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգում: Այս ամենով հանդերձ՝ վստահեցնում եմ, որ այնպիսի բացթողումներ չեն եղել, որոնց համար երբեւէ կարելի է ամաչել, որոնց հետեւանքով տուժեին սիսիացին, նրա հեղինակությունը կամ սկսած գործը:

– Համայնքային կառավարման բնագավառում արդեն մեծ փորձ ունեք. Ձեր կարծիքով՝ ՏԻՄ-ի մասին գործող օրենքը բավարարո՞ւմ է տեղական ինքնակառավարման պահանջներին, թե՞ փոփոխությունների կարիք ունի:

– ՏԻՄ-ի մասին օրենքի փոփոխությունը ժամանակի հրամայական պահանջն է, որ բավական լուրջ քննարկման հարց է: Բացթողումները մեկ-երկու կետում չեն, այլ՝ բազմաբնույթ ու բազմազան: ՏԻՄ-ը պետք է հզորացվի, որպեսզի երկիրը հզորանա: Համայնքին պետք է ավելի շատ իրավունքներ տրվեն. այսօրվա կարգավիճակով մենք ավելի շատ պարտականություններ ունենք, քան իրավունքներ: Համայնքի ղեկավարի կամ ՏԻՄ-ի լիազորությունների պակասը, ապակենտրոնացման դանդաղեցումն ազդում են աշխատանքների արդյունավետության վրա: Ի վերջո, ժամանակները փոխվում են, երեւան են գալիս նոր իրողություններ, նոր սահմանադրություն ունենք, ինչպե՞ս կարող է այդ ամենը գործող օրենսդրության փոփոխության պահանջ չառաջացնել:

– Եվ, փաստորեն, ՏԻՄ-ի մասին օրենքը նույնը թողնելով՝ մեր երկրում սկսվել է համայնքների խոշորացման գործընթացը, ինչի վերաբերյալ տարաբեւեռ կարծիքներ կան:

– Իմ համոզմամբ՝ համայնքների խոշորացման կամ միավորման միակ եւ նախընտրելի ելքը Մեղրու տարածաշրջանի տարբերակն է, իսկ փնջային տարբերակով խոշորացման արդյունավետությունը ցույց կտա ժամանակը: Ես կարծում եմ՝ նախկին վարչական շրջանները պետք է վերականգնել,

14 ապրիլի 2013թ., պսակադրություն Համո Սահյանի հուշարձանին

Տիգրան Մանսուրյանի հետ

որը թե՛ ծախսերի, թե՛ կառավարման առումով շատ արդյունավետ էր:

– Ձեր հակառակորդներն այս օրերին հաճախ են շահարկում փաստը, որ Ձեր պաշտոնավարման ժամանակ քաղաքապետարանից մարդիկ են դատվել: Որքանո՞վ է օբյեկտիվ այդ մեղադրանքը:

– Թյուր կարծիք է, հիմքեր չունեցող քննադատություն, քանի որ քաղաքապետարանից ոչ մեկը չի դատվել, փորձել են շինծու հայցերով եւ դատարանի ուժով առանձին մարդկանց մեղքեր վերագրել, սակայն դատարանը մերժել է՝ հանցակազմի բացակայության պատճառով: Եթե քաղաքապետարանում օրենքի որոշակի խախտումներ են գրանցվել, ապա մեղավորները թող պատասխան տան դրա համար: Այդ խոսակցություններն ավելի շատ նպատակ ունեն իմ անունն արատավորելու, քան թե որոշակի չարաշահումների մասին բարձրաձայնելու: Այն մարդիկ, ովքեր շահագրգռված են նման հրապարակումներով, իրենց ապրած կյանքով ավելի շատ են ներառված հանցախմբերի մեջ եւ ավելի շատ հանցանքներ են գործել ի վնաս մեր ժողովրդի: Ինձ մեղադրողները թող հետադարձ հայացք ձգեն, քանի դեռ ես չեմ հիշեցրել…

– Հատկապես վերջին շրջանում Ձեր մասին հրապարակվում են կեղծ ստորագրություններով, իսկ երբեմն ակնհայտ զրպարտություն ու ակնհայտ վիրավորանք պարունակող հոդվածներ, որոնց Դուք չեք անդրադառնում: Ինչո՞ւ:

– Ասում են՝ լռությունը համաձայնության նշան է, բայց այս դեպքում ամենեւին այդպես չէ: Ճանաչելով հոդվածագրին՝ չեմ կարդում նման անբարո հոդվածները, բայց, հավատացնում եմ, որ նման հրապարակումները ժողովրդի շրջանում հոդվածագրի հանդեպ բացասական վերաբերմունք եւ արհամարհանքի զգացում են առաջացնում: Դա ամենամեծ պատասխանն է բոլոր առումներով մերժված այդ վայ հոդվածագրին: Ես, իհարկե, չեմ անդրադառնում դրանց, քանի որ հաշվի եմ առնում, որ դիմացինս սովորական խեղկատակ ու թշվառական է, իրենից ոչինչ ներկայացնող անձնավորություն, եւ նրա համար շատ կլիներ երկխոսության մեջ մտնելը: Այդ քննադատություն կոչված հարայհրոցն անձնավորված է, եթե այն նպատակ ունենար համայնքային որեւէ խնդիր լուծելու, անմիջապես կարձագանքեի՝ ուղղելով մեր բացթողումները: Որպես քաղաքապետ՝ չեմ ուզում իջնել այն հատակը, որտեղ հավերժորեն հանգրվանել է հոդվածագիրը, որտեղից փորձում է վրեժ լուծել՝ իր չկայացածության համար:

– Մի քանի օր առաջ ՀՀԿ Սիսիանի տարածքային կառույցը հայտարարեց, որ հոկտեմբերի 2-ի ընտրություններում պաշտպանում է Արթուր Սարգսյանի թեկնածությունը: Ի՞նչ կասեք այդ մասին:

– Յուրաքանչյուր ընտրություն նախորդի կրկնությունը չէ, եւ իրավիճակի նման փոփոխությունը բնավ զարմանալի չէ. դա մի քանի հոգու ցանկությունն էր եւ ոչ ՀՀԿ շարքերի կամ կենտրոնական մարմնի: Առհասարակ կուսակցության կենտրոնական մարմիններն են որոշում՝ որեւէ թեկնածուի պաշտպանե՞լ, թե՞ չպաշտպանել:

> *Ինչ-որ մարդկանց անձնական դիրքորոշումը դեռ կուսակցության դիրքորոշում չէ: Մյուս կողմից՝ ավանդական կուսակցությունների լռությունը, նախեւառաջ, իմ աշխատանքի գնահատականն է: Ես անկուսակցական եմ, եւ կուսակցությունները չեն առաջադրել թեկնածու, չեն հակադրվել ինձ, քանի որ նրանց համար ցանկալի թեկնածու եմ:*

Սիսիանում բարոյահոգեբանական, քաղաքական մթնոլորտը նորմալ է՝ շնորհիվ իմ եւ թիմակիցներիս անկեղծ գործունեության: Աշխատանքներն իրականացվում են օրենքի շրջանակներում, եւ չեմ կարծում, որ կուսակցական շահն ավելի կարեւոր է, քան ժողովրդի շահը: Իմ աշխատելաոճը, կատարած աշխատանքները, կարծում եմ, ընդու-

էջ 6

Սիսիան համայնքի ղեկավարի թեկնածու Աղասի Հակոբջանյանի նախընտրական ծրագիր

Այս տարիների ընթացքում իմ եւ թիմակիցներիս աշխատանքը մշտապես ուղղված է եղել մեր քաղաքի բարեկարգմանը, բնակիչների համար բարեկեցիկ պայմանների ստեղծմանը: Անշուշտ, փոփոխություններն ակնհայտ են, սակայն՝ ոչ բավարար: Մենք հստակ շարունակելու ենք քաղաքի զարգացմանը միտված ծրագրերը, որոնք առաջին հերթին ուղղված են լինելու համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի, համայնքային ծառայությունների որակի բարելավմանը: Ծառայությունները բազմաբնույթ են եւ դրանց որակական փոփոխության համար անհրաժեշտ է շարունակական ու հետեւողական աշխատանք՝ բազմապատկված ջանքերով ու եռանդով: Մեծապես կարեւորում եմ մասնակցային գործընթացները համայնքային հիմնախնդիրների վերհանման եւ քննարկման ժամանակ:

Հարգելի՛ համաքաղաքացիներ, միայն բոլորիս շահագրգիռ եւ սրտացավ մոտեցմամբ է հնարավոր լուծել համայնքի խնդիրները: Յուրաքանչյուրիս է կախված, թե ինչպիսի Սիսիան կունենանք հինգ տարի անց: Վստահ եմ, որ համատեղ աշխատանքի դեպքում մեր հաջողությունն ապահովված կլինի:

Առաջնահերթ եմ համարում հետեւյալ խնդիրները՝

- շարունակել տնտեսության բարելավման եւ զարգացման ծրագրերը,
- բարձրացնել համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների եւ սպասարկման որակը, բարելավել համայնքի բյուջեի եկամուտների հավաքման աշխատանքները,
- հասնել Ֆիզկուլտուրնիկների 6 վթարային շենքի խնդրի հանգուցալուծմանը,
- համայնքային բյուջեից եւ այլ աղբյուրներից միջոցներ ներգրավել բազմաբնակարան շենքերի բակային հատվածների, տանիքների եւ մուտքերի բարեկարգման նպատակով,
- շարունակել հանրային հատվածների կանաչապատման եւ լուսավորության աշխատանքները,
- շարունակել համայնքային փողոցների ասֆալտապատման նպատակով պետական եւ միջազգային ֆինանսական միջոցների ներգրավումը,
- բարելավել կրթության եւ մշակույթի ոլորտում գործող համայնքային կազմակերպությունների ծառայությունների որակը,
- նպաստել համայնքի տարածքում փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը,
- համագործակցել պետական, միջազգային կազմակերպությունների, քույր քաղաքների հետ՝ համայնքում ապահովելով նոր ներդրումներ, միաժամանակ խթանել զբոսաշրջության զարգացումը,
- զարգացնել միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ ի շահ մեր համայնքի բնակիչների,
- աջակցել երիտասարդական նախաձեռնություններին եւ ներդրողներին, հնարավորություն ստեղծել նրանց գաղափարների իրականացման համար,
- համայնքում շարունակել ամրապնդել ՏԻՄ եւ բնակչության կապը նորարարական տեխնոլոգիաների ներդրման միջոցով,
- միջոցներ ձեռնարկել համայնքի զոհված եւ վիրավոր ազատամարտիկների, սոցիալապես անապահով ընտանիքների կենսապայմանների բարելավման համար: ■

Հաշվետվություն

Սիսիանի համայնքապետարանի 2012-2016թթ. գործունեության հաշվետվություն

Ֆինանսական ոլորտ

2012-2016թթ. ընթացքում Սիսիանի համայնքային բյուջեն նկատելի աճ է արձանագրել:

2012թ. բյուջեն եկամուտների գծով կազմել է 290 մլն 477.3 հազ. դրամ, ծախսերի գծով՝ 286 մլն 128.3 հազ. դրամ, 2015թ. եկամուտների գծով՝ 422 մլն 825.1 հազ., ծախսերի գծով՝ 418 մլն 378 հազ. դրամ: Ըստ 2016թ. պլանավորված բյուջեի՝ եկամուտները կկազմեն 403 մլն 624.4 հազ., ծախսերը՝ 414 մլն 512.1 հազ. դրամ:

Ավելացված գումարների հաշվին բարձրացվել է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների որակը: Մասնավորապես՝ քաղաքում տեղադրվել են նոր լուսատուներ, բարձրացվել է համայնքային ենթակայության հաստատությունների աշխատակիցների նվազագույն աշխատավարձը, նախադպրոցական հաստատությունների սննդի կալորիականությունը, ենթակա կառույցները համալրվել են նոր տեխնիկական եւ այլ միջոցներով:

Նշված տարիների ընթացքում համայնքային բյուջեն կատարվել է 96-98.5 տոկոսով:

Քաղաքաշինության եւ կոմունալ տնտեսության ոլորտ

2012-2016թթ. իրականացված աշխատանքների շնորհիվ նկատելի առաջընթաց է ապահովվել հատկապես աղբահանության կազմակերպման, ճանապարհների եւ բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման, փողոցային լուսավորության ցանցի ընդլայնման առումով:

2012-2016թթ. քաղաքաշինական ծրագրերն ուղղված են եղել քաղաքի գլխավոր հատակագծով նախատեսված կարեւորագույն խնդիրների լուծմանը: Պետություն-համայնք համագործակցության շնորհիվ քաղաքի Արամ Մանուկյան, Իսրայելյան, Սիսական, Գ.Նժդեհ, Չարենց, Շիրվանզադե եւ Շիրակ փողոցներում հիմնանորոգվել է շուրջ 5 կմ երկարությամբ մոտ 5000քմ ճանապարհ՝ կահավորվել պահանջվող բոլոր ճանապարհային նշաններով: Հաշմանդամության սայլակներով տեղաշարժվող անձանց համար կառուցվել են համապատասխան անցումային մասեր:

Ասֆալտապատվել են նաեւ Գայի 10, 14, Որոտան 1, 2, 3, 4, 5, 6, 7 եւ 8 բազմաբնակարան շենքերի բակային հատվածները՝ շուրջ 4200 քմ, վերականգնվել՝ ջրհորդանները: Հիմնովին նորոգվել են Գայի 1, 3, 15, Որոտան 1, 2 եւ 5 բազմաբնակարան շենքերի տանիքները՝ շուրջ 3800քմ մակերեսով: Մեծածավալ շինաշխատանքներ են կատարվել նոր կառուցվող 800քմ մակերեսով մարզահամալիրում:

Սիսիանի քաղաքապետարանի եւ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի համագործակցության շնորհիվ վերականգնվել են թիվ 2, 4 նախակրթարանների, Որոտան 2 եւ 4 բազմաբնակարան շենքերի կոյուղագծերը:

Աշխատանքներ են իրականացվել քաղաքի արտաքին լուսավորության ցանցի արդիականացման ուղղությամբ: Քաղաքի 446 լուսատու փոխարինվել է էներգախնայող լուսատուներով, իսկ 3 փողոցում՝ Գայի, Սյունիքի եւ Երիտասարդական, տեղադրվել է 33 նոր լուսատու:

Իրականացվել են քաղաքի բազմաբնակարան շենքերի 17 շքամուտքի նորոգման աշխատանքներ:

Քաղաքում անհատական տների աղբահանությունը կատարվել է շաբաթական 2 անգամ, իսկ բազմաբնակարան շենքերինը՝ 3 անգամ: Քաղաքի բոլոր աղբամանները եւ դրանց շրջակայքը, ինչպես նաեւ քաղաքային աղբավայրի տարածքները պարբերաբար ախտահանվել են:

2016թ. նախատեսված է պետական միջոցների հաշվին իրականացնել՝

1. երաժշտական դպրոցի հիմնանորոգում՝ շուրջ 40 մլն դրամի շրջանակում,
2. Որոտան 3, Գ Նժդեհի 2 եւ 4, Սիսական 46 բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգում,
3. Գայի 6, Գայի 4, Խանջյան 3ա, 3բ եւ Ն.Ադոնցի 1 բազմաբնակարան շենքերի բակային մասերի ասֆալտապատում,
4. Սիսիան-Իշխանասարի խաչմերուկ ճանապարհի եւ Սպանդարյան փողոցի ասֆալտապատում:

Հողօգտագործման բնագավառ

Սեփականության իրավունքով անհատույց ԵԿՄ անդամ ազատամարտիկներին է նվիրաբերվել Սիսիան քաղաքի Խանջյան փողոցի հարեւանությամբ գտնվող 4 հողակտոր՝ 600-ական քմ մակերեսով՝ բնակելի տուն կառուցելու նպատակով: Բնակարաններ են նվիրաբերվել նաեւ թվով 7 այն քաղաքացիներին, ովքեր նախկինում չեն կարողացել սեփականաշնորհել իրենց բնակարանները:

Պետական աջակցության ծրագրով համայնքի հողօգտագործողներին հնարավորություն է տրվել մատչելի գներով ձեռք բերել դիզելային վառելիք, պարարտանյութ եւ սերմացու:

Բնապահպանության բնագավառ

Յուրաքանչյուր տարի կատարվել են քաղաքի կենտրոնական հատվածների ծառերի հատման եւ էտի, բների կրապատման աշխատանքներ: Հետեւողական գործունեություն է իրականացվել քաղաքի տարածքում թափառող շների վնասազերծման ուղղությամբ:

Կրթության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության հետ տարվող աշխատանքներ

Սիսիանը հանրապետության այն եզակի քաղաքներից է, որտեղ համայնքային ենթակայությամբ հաջողությամբ շարունակում են գործել գեղարվեստի, երաժշտական, մանկական արվեստի (պարարվեստի), շախմատի եւ ֆուտբոլի դպրոցները, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը: Համայնքային ենթակայությամբ են գործում նաեւ քաղաքային գրադարանը, Համո Սահյանի անվան քաղաքային մշակույթի կենտրոնը: Նախադպրոցական ուսումնական հաստատությունները 4-ն են:

2013-16թթ. շարունակվել են համայնքային ենթակայության կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի ամրապնդման եւ շենքերի վերանորոգման աշխատանքները:

Վերանորոգվել են N1 եւ 3 ՆՈՒՀ-երի մեկական խմբասենյակներ: Բոլոր նախակրթարանների խոհանոցներն ապահովվել են նոր կահույքով, բժշկական կաբինետները՝ անհրաժեշտ սարքավորումներով, N 4 ՆՈՒՀ-ը՝ 14 երկհարկանի մահճակալով:

Թարմացվել է բոլոր կազմակերպությունների համակարգչային տեխնիկան: Կրկնապատկվել է նախադպրոցական հիմնարկների երեխաներին տրվող սննդի չափաբաժինը՝ համապատասխանեցվելով նորմատիվային պահանջներին:

Յուրաքանչյուր տարի նախադպրոցական ուսումնական հաստատություն է հաճախել 430-450 երեխա:

Վերապատրաստվել են ՆՈՒՀ-երի բոլոր տնօրենները եւ մանկավարժ-դաստիարակները: ՀՀ ԿԳ նախարարություն են ներկայացվել 4 ՆՈՒՀ-ի լիցենզավորման փաստաթղթերը: Հիմնովին վերափոխվել է համայնքային ենթակայության կազմակերպությունների գործունեությունը, հատուկ ուշադրություն է դարձվել կրթության եւ դաստիարակության որակի բարելավմանը, դրանք համապատասխանեցվել են պետական չափորոշիչներին:

Արտադպրոցական հաստատությունները յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում ունենում են 630-650 սան:

Համայնքի բյուջեի եւ միջազգային կառույցների ֆինանսական միջոցների հաշվին մշակույթի կենտրոնի նյութատեխնիկական բազան համալրվել է 4.6 մլն, երաժշտական դպրոցինը՝ 2,6 մլն, գեղարվեստի դպրոցինը՝ 2.3 մլն, մանկական արվեստի դպրոցինը՝ 1.9 մլն դրամի սարքավորումներով, հագուստով, երաժշտական գործիքներով եւ կահույքով: Դա նպաստել է քաղաքում կրթության, մշակույթի եւ սպորտի բնագավառներում լուրջ առաջընթացին:

Նշված տարիներին քաղաքային մշակույթի կենտրոնում տեղի է ունեցել 29 համերգ, 66 կինոցուցադրում, 31 թատերական ներկայացում: Մշակույթի կենտրոնի նորաստեղծ թատերական խումբը քաղաքում եւ հարակից գյուղերում տվել է 21 թատերական ներկայացում, իսկ ժողգործիքների համույթը՝ 16 համերգ: Ժողգործիքների համույթի մեներգչուհի Անուշ Աղաջանյանը քաղաքապետարանի աջակցությամբ 2013թ. մասնակցել է Բուլղարիայում կայացած «Աշխարհի ֆոլկլոր-2013» համաշխարհային 3-րդ մրցույթին, արժանացել ոսկե մեդալի:

Յուրաքանչյուր տարի երաժշտական դպրոցի 7-11 սան մարզային, հանրապետական եւ միջազգային մրցույթ-փառատոներում արժանացել է դիպլոմների եւ պատվոգրերի: 2015թ. արդյունքներով՝ հանրապետության երիտասարդ կատարողների մրցույթում հաղթող է ճանաչվել երաժշտական դպրոցի մեկ եւ գեղարվեստի դպրոցի 4 սան:

Երաժշտական դպրոցի սան Սուսաննա Հունանյանը մասնակցել է «Ժողովուրդների բարեկամություն-2016» միջազգային մրցույթ-փառատոնին, «Էստրադային վոկալ» անվանակարգում արժանացել 2-րդ կարգի դիպլոմի, «ԱՐՏ ՄՅՈՒԶԻՔ» արվեստի հանրապետական 7-րդ մրցույթ-փառատոնում դարձյալ «Էստրադային վոկալ» անվանակարգում արժանացել է առաջին կարգի դափնեկրի կոչման:

Գեղարվեստի դպրոցի սաներից 16-ը մասնակցել է «Եգիպտոսը՝ երեխաների աչքերով» միջազգային մրցույթին, նրանցից 2-ն արժանացել է արծաթե մեդալի:

2015թ. 15 աշակերտ մասնակցել է Եղեռնի 100-ամյակին նվիրված համահայկական ցուցահանդեսին, 10-ի աշխատանքները ցուցադրվել են ազգային պատկերասրահում:

Ութ սան մասնակցել է «Հնդկաստանը՝ երեխաների աչքերով» մրցույթին, 2-ը արժանացել է 2-րդ կարգի պատվոգրի:

Մանկական արվեստի դպրոցի սաները բոլոր տարիներին «Նոր շունչ» բազմաոճ պարային մրցույթ-փառատոնում, մանկական միջազգային փառատոներում եւ «Հայ-Արտ փրոդաքշն»-ի մրցույթներում մշտապես արժանացել են մրցանակային տեղերի եւ «Գրան պրի» մրցանակի, բազմիցս մեկնել արտասահմանյան ուղեւորություններ:

Սիսիանի քաղաքապետարանի հայտով Համահայկական 6-րդ ամառային խաղերին մասնակցած Սիսիան քաղաքի թիմը 100 քաղաքի հաշվարկով 14-րդն էր. լողափնյա վոլեյբոլի թիմը գրավել է 1-ին, դասական վոլեյբոլի թիմը՝ 3-րդ տեղը: Արվեստի դպրոցի սաները սպորտային պարերի գծով զբաղեցրել են 2-րդ եւ 3-րդ տեղեր:

Քաղաքի ֆուտբոլի թիմը 2013թ. Հայաստանի պատանեկան առաջնությունում գրավել է 2-րդ, 2015թ.՝ 3-րդ տեղը:

Հաջողություններ են ձեռք բերվել նաեւ շախմատի մասսայականացման ուղղությամբ: Դպրոցի սաների թիվն ավելացել է 40-ով: Նրանք մշտապես մասնակցություն են ցուցաբերել մարզային եւ հանրապետական առաջնություններին, գրավել մրցանակային տեղեր, իսկ մարզիչ Վարդան Մովսիսյանը դարձել է մարզի չեմպիոն:

Բոլոր օլիմպիադաներին, մրցույթ-

Սիսիանում ամեն տարի կազմակերպվում է հացի փոնը:

5 հունիսի 2015թ., Համահայկական ծաղկի փոն Սիսիանում

14 ապրիլի 2016թ., Համո Սահյանի փուն-թանգարանում

Յոթ տարի է՝ Սիսիանում նշվում է երիտասարդության օրը

Հանրապետության առաջատար գիտնականների մասնակցությամբ կազմակերպվեց գիտաժողով՝ նվիրված Նիկողայոս Ադոնցի 140-ամյակին

2015թ. Գերմանիայի Ռավենսբուրգ քաղաքում Սիսիանից չորս երիտասարդ մասնակցել է «Եվրոպան կենդանի է գույներով» միջազգային կոնֆերանսին

փառատոներին եւ մարզական խաղերին երեխաների մասնակցությունն ապահովելու համար տրամադրվել են տրանսպորտային միջոցներ եւ գործուղման ծախսեր, ընդհանուր հաշվով՝ տարեկան 2-3 մլն դրամի չափով:

Յուրաքանչյուր տարեվերջին կազմակերպվել են հանրապետական, մարզային օլիմպիադաներում, մշակութային փառատոներում եւ մարզական խաղերում հաղթանակած երեխաների մեծարումներ եւ պարգեւատրումներ:

Լուրջ ուշադրություն է դարձվել համայնքի տարածքում ՀՀ տոների եւ հիշատակի օրերի, այլ մշակութային եւ մարզական միջոցառումների կազմակերպմանը: Մասնավորապես՝ կազմակերպվել է Ն.Ադոնցի 140-ամյակին նվիրված գիտագործնական կոնֆերանս, մեծ շուքով նշվել է Հ.Սահյանի ծննդյան 100-ամյա հոբելյանը, պատշաճորեն կազմակերպվել են Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված ոգեշնչման հուշ-երեկո, գեղանկարիչներ Սլավիկ Խաչատրյանի եւ Վանիկ Զոհրաբյանի անհատական ցուցահանդեսները:

Հաշմանդամների «Խարիսխ» հկ-ի հետ համատեղ կազմակերպվել է համահայկական Ծաղկի տոն:

Ամեն տարի կազմակերպվել են ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» եւ «Լավագույն նախադպրոցական հիմնարկ» մրցումներ, նախադպրոցական հիմնարկների երեխաների մասնակցությամբ՝ սպորտլանդիաներ:

ՎիվաՍել-ՄՏՍ-ի հետ համագործակցության շրջանակում մանկապատանեական ստեղծագործության կենտրոնում ստեղծվել եւ կահավորվել է համակարգչային կաբինետ:

Վերջին չորս տարում զգալի ձեռքբերումներ են արձանագրվել երիտասարդության հետ տարվող աշխատանքներում: 2014թ. Սիսիանը հռչակվել է ՀՀ առաջին երիտասարդական մայրաքաղաք, որի շրջանակում իրականացվել են մի շարք միջազգային, հանրապետական եւ տեղական նշանակության միջոցառումներ, մասնավորապես՝ աշխատանքի տոնավաճառ, ԱՊՀ պետությունների մշակույթի եւ սպորտի նախարարությունների մակարդակով երիտասարդության հարցերի խորհրդի նիստ, Արեւելյան գործընկերության երկրների երիտասարդական քաղաքականության աջակցության ծրագրի ազգային աշխատաժողովներ եւ այլն: Սիսիանն ունեցավ իր օրհներգը, որի հեղինակն է անվանի կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանը: Այդ տարում քաղաքում ստեղծվեցին 9 նոր երիտասարդական հկներ եւ հիմնադրամներ:

Քաղաքապետարանի հետ համագործակցությամբ քաղաքում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվել է համայնքային զարգացման 17 ծրագիր:

Ամեն տարի մեծ շուքով նշվում են Երիտասարդության միջազգային օրը, Հացի տոնը: Վերջին տարիներին ակտիվացել են երիտասարդության փոխադարձ այցերը ինչպես հանրապետության, ԼՂՀ տարածքում, այնպես էլ՝ քույր քաղաքների շրջանակում: Յուրաքանչյուր տարի մի խումբ սիսիանցի երիտասարդներ մասնակցել են ԼՂՀ-ում Շուշիի ազատագրման օրվան նվիրված երթ-արշավին:

Սոցիալական ապահովության ոլորտ

Կանոնակարգվել են սոցիալական աջակցության աշխատանքները: Յուրաքանչյուր տարի քաղաքապետարանը սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրում է 1 մլն դրամի չափով դրամական օգնություն, մեկ երեխայի օժանդակել է ուսումը շարունակելու Դիլիջանի միջազգային դպրոցում, մեկ երեխայի՝ մասնակցելու Հունաստանում կայացած շախմատի աշխարհի պատանեկան առաջնությանը: Տարեմուտի առթիվ նախադպրոցական հիմնարկների, սոցիալապես անապահով խավի շուրջ 1000 երեխաների, պատերազմի եւ աշխատանքի վետերանների տրվել են Ամանորի նվերներ:

Բանակի օրվա եւ տարեմուտի կապակցությամբ աջակցություն է ցուցաբերվել Սիսիանում տեղակայված գնդին: Վերջինիս հետ համատեղ կազմակերպվել են մշակութային միջոցառումներ:

Յուրաքանչյուր տարի զոհված, վիրավոր ազատամարտիկների եւ սոցիալապես անապահով ընտանիքների 30-40 երեխա ամռան ամիսներին հանգստացել է Հանքավանի ճամբարներում, որոնց տրանսպորտային ծախսերը հոգացել է քաղաքապետարանը:

Միջազգային համագործակցություն

Սիսիանի համայնքապետարանը շարունակել է համագործակցությունը միջազգային եւ հասարակական կազմակերպությունների հետ՝ էլ ավելի սերտացնելով փոխշահավետ համատեղ գործունեությունը համայնքային խնդիրների լուծման նպատակով:

«Քաունթերփարթ» միջազգային կազմակերպությունը լուրջ ներդրում ունեցավ համայնքային ծրագրերի իրականացման գործում: Կազմակերպության աջակցությամբ, համայնքային ակտիվ խմբի եւ Սիսիանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ Սիսիանում տեղադրվեց հասարակական տրանսպորտի ութ կանգառ, մանկապատանեական ստեղծագործության կենտրոնում ստեղծվեց ժամանակակից մարզասարքերով կահավորված մարզասրահ: Համայնքային արտադպրոցական կրթության եւ մշակութային կառույցները համալրեցին իրենց գույքացանկը նոր սարքավորումներով, երաժշտական գործիքներով, անհրաժեշտ նյութերով եւ պարագաներով:

Քույր քաղաքների համագործակցությունը նոր երանգ ստացավ մի շարք արդյունավետ ծրագրերի եւ փոխայցելությունների շնորհիվ: Հունահայ երիտասարդներն այցելեցին Սիսիան՝ ծանոթանալու հայկական մշակույթին եւ իրենց սիսիանցի հասակակիցների հետ:

Ֆրանսիական «Հայկական մշակույթ եւ հիշողություն» ասոցիացիայի եւ Մոնտելիմարի քույր քաղաքների կոմիտեության հետ համագործակցությունը նոր շունչ հաղորդեց Սիսիան-Մոնտելիմար քույր քաղաքների բարեկամությանը: Պաշտոնական փոխայցելությունները դարձան բարեկամական, իսկ երկու քաղաքի երիտասարդները ստեղծեցին ամուր ընկերություն, որն ամրապնդվեց երիտասարդների փոխայցելության շնորհիվ: Մոնտելիմարի բարեկամները բուժսարքավորումներ նվիրաբերեցին Սիսիանի բժշկական կենտրոնին:

Դի-Վի-Վի միջազգային կազմակերպության շնորհիվ Սիսիանում հիմնվեց «Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոն» հիմնադրամը, որը գործունեության երեք տարվա ընթացքում ունեցել է շուրջ 400 ուսումնառու, ովքեր ստացել են գիտելիքներ եւ հմտություններ տարբեր մասնագիտություններով:

«Վորլդ Վիժն» միջազգային կազմակերպության աջակցությամբ այս տարիներին իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնցից են՝ երկու նախակրթարանի ջեռուցման համակարգի անցկացումը, երիտասարդությանն ուղղված բազմաթիվ կրթական եւ մշակութային ծրագրեր:

Արտերկրում բնակվող մեր համերկրացի բարերարները եւս անմասն չեն համայնքային խնդիրների լուծման գործընթացներից: Համայնքի ղեկավարի միջնորդությամբ Բելգիայում բնակվող Մակար Գրիգորյանի կողմից Սիսիան քաղաքային համայնքին նվիրաբերված 12 տոննա ներկը բարեկարգման աշխատանքների կազմակերպման նպատակով անվճար տրամադրվեց ինչպես համայնքային, այնպես էլ մարզային կրթական կառույցներին, իսկ բազմաբնակարան շենքերի բնակիչներն իրենց տրամադրված շինանյութերով եւ ներկով, սեփական ուժերով, վերանորոգեցին շքամուտքերը:

Մակար Գրիգորյանը նաեւ նյութական օժանդակություն է կազմակերպել ապրիլյան քառօրյա պատերազմում զոհված սիսիանցի ազատամարտիկների ընտանիքներին:

Համագործակցելով ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հետ՝ «Մաքուր ջուր եւ էներգիա» ծրագրի շրջանակում իրականացվեց Սիսիանի N 4 նախադպրոցական ուսումնական հաստատության արտաքին ջերմամեկուսացում: Փոխվել են բոլոր արտաքին դռներն ու պատուհանները: Արդյունքում միայն գազի օգտագործման խնայողությունը նախորդ տարվա համեմատ կազմում է տարեկան 1500խմ կամ ընդհանուր ծախսի 35%-ը, իսկ սենյակների ջերմաստիճանը բարձրացել է +5C-ով՝ կազմելով 20-21C:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հետ համագործակցության արդյունքում Սիսիան համայնքը հանրապետության վեց այլ համայնքի հետ ընդգրկվեց «Արդյունքահեն բյուջետավարում» ծրագրում: Այն միտված է խթանելու առավել թափանցիկ եւ արդյունավետ կառավարումը եւ բյուջետային միջոցների նպատակային օգտագործումը: Սիսիան համայնքը համայնքային կառավարման տեղեկատվական համակարգով, թափանցիկ գործունեությամբ հանրապետության առաջատարներից է:

2015թ. տեղի ունեցավ «Եվրոպան կենդանի է գույներով» միջազգային կոնֆերանսը, որտեղ 11 երկրների շարքում Հայաստանը ներկայացնում էին սիսիանցի 4 երիտասարդներ՝ համայնքի ղեկավարի գլխավորությամբ: Կոնֆերանսը նպատակ ուներ ներկայացնելու Եվրոպական մշակույթը, ստեղծելու շփումներ տարբեր ազգերի ներկայացուցիչների հետ, ձեռք բերելու գիտելիք, ընկերներ, վստահություն, առաջ գնալու շատ ավելի մեծ ձգտում եւ ստեղծելու հնարավորություններ նորանոր համատեղ ծրագրերի համար:

Բոլորովին վերջերս ՅՈՒՆԵՍԿՕ-ի ուսումնառու քաղաքների համաշխարհային ցանցին անդամակցելու Սիսիան քաղաքի հայտը դրական եզրակացություն է ստացել: Սիսիանը Հայաստանի առաջին քաղաքներից է, որն անդամակցում է միջազգային այս հայտնի կառույցին: Դա հնարավորություն կտա մեր քաղաքացիներին ընդգրկվելու կազմակերպության կրթական եւ մշակութային ծրագրերում:

Այսուհետ Սիսիանի համայնքապետարանում կիրականացվի ՏԻՄ գործունեության թափանցիկության ապահովմանն ուղղված եւս մեկ ծրագիր: ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ համագործակցության արդյունքում ստացվել են սարքավորումներ, որոնք ուղիղ հեռարձակման շնորհիվ թույլ կտան հանրությանը հետեւել ավագանու նիստերին: ■

Հարցազրույց ընտրությունների առիթով

Համո Սահյանի հուշարձան-կոթողը Սիսիանի կենտրոնում

ԱՂԱՍԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ.

«Համաքաղաքացիներիս հետ եղել եւ մնում եմ անկեղծ, ինչի համար եւ ակնկալում եմ նրանց վստահության քվեն»

էջ 3

նելի են բոլոր կուսակցությունների համար: Այս ութ տարվա ընթացքում բոլորի հետ հավասարաչափ եմ աշխատել, ծավալել պետականամետ գործունեություն, որ ավելի կարեւոր է, քան կուսակցական լինել՝ ինչ-որ ակնկալիքներ ունենալով: Այնպես որ՝ սիսիանցին համայնքի ղեկավար ընտրելու, ազատ կամարտահայտման բոլոր հնարավորություններն ունի: Եվ պատահական չենք ընտրել մեր կարգախոսը՝ աշխատենք միասին՝ վեր անձնական շահերից:

– Ձեր մրցակիցները պնդում են, որ Սիսիանի հանրության մեջ բազմաբեւեռություն է, որ անհամերաշխության մթնոլորտ է իշխում, մինչդեռ Դուք հակառակը նշեցիք:

– Կուզեի, որ իմ մրցակիցներն առավել առարկայական խոսեին, ո՞ւմ հետ է անհամերաշխությունը: Միգուցե իրենք ինչ-որ մեկի հետ անձնական խնդի՞ր ունեն, բայց դա իրենց գործն է… Ստեղծված իրավիճակը ոչ թե բազմաբեւեռություն է, այլ բազմակարծության դրսեւորում, որը խոսում է հանրության առողջության մասին: Իմ աշխատակազմում բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներ կան, իմ հարաբերությունները բոլոր կառույցների հետ ջերմ են, իհարկե, աշխատանքային տարաձայնություններ կան, բայց դա էլ բնական երեւույթ է, այլ ոչ բեւեռացում: Միգուցե աշխատանքային գործընթացում որոշ հարցերի շուրջ հակադրվում ենք, բայց պահպանում ենք անձնական մտերմությունը: Այդ անհամերաշխության մթնոլորտը նրանց համար ցանկալի երազ է: Նաեւ իմ շնորհիվ, կարծում եմ, Սիսիանը շատ տարիներ է՝ ոմանց համար ցանկալի անհամերաշխ վիճակ չի տեսել ու չի տեսնելու:

2012թ., Աղասի Հակոբջանյանը ՀՀ փոխվարչապետ Արմեն Գեւորգյանի, Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի եւ Կապանի քաղաքապետ Արթուր Աթայանի հետ

– «Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմն ականատես է եղել Աղասի Հակոբջանյանի՝ ապրիլյան պատերազմի օրերին առաջնագծում լինելուն, որ նպատակ ուներ սատարել սահմանին գտնվողներին: Բայց հետագայում շահարկվեց այդ ամենը, կասկածի տակ առնվեց հանգանակություններն ըստ նպատակի օգտագործելը եւ այլն: Դուք փորձեցիք այդ ամենին իրավական գնահատական տալ, բայց հետ կանգնեցիք, ինչո՞ւ:

– Անբարո այդ շահարկումներին չեմ ուզում անդրադառնալ, քանի որ դրանով ոչ միայն ինձ, այլեւ սիսիանցուն, որ հոգու կանչով մարտի դաշտ մեկնեց, փորձեցին պիտակավորել, վիրավորել: Սգավոր համայնքում այդ օրերին նման հարց մոգոնելը մեծագույն անբարոյականություն է: Ընչաքաղցը չպետք է իր արշինով չափեր ազնիվ այդ գործընթացը, եւ միայն նմաններն են ի վիճակի այդպիսի սրբապիղծ քայլեր կատարել: Հանգանակությունների հարցերով զբաղվող հանձնաժողովը մինչ օրս իրականացնում է համակարգման աշխատանքները՝ բնավ ուշադրություն չդարձնելով զրպարտիչների բարբաջանքներին:

– Լուսավոր Հայաստան կուսակցությունը հանրապետության հատուկենտ համայնքներում է հավակնություն դրսեւորում: Սիսիանում այդ կուսակցությունը ներո՞ւժ ունի, թե՞ ուժերի փորձարկում է, կամ միգուցե թողնենք՝ ընտրողը պատասխանի այդ հարցին:

– Առհասարակ ամեն նորություն դժվարությամբ է ճանապարհ հարթում, միգուցե Սրբուհի Գրիգորյանի պարագայում այդ կուսակցության շուրջ Սիսիանում աշխուժություն նկատվի, բայց, իմ կարծիքով, դա չի կարող տեղի ունենալ: Բազմակարծության եւ ազատ դաշտ ունենալու դրսեւորում է երեւույթը, երբ ավագանու անդամը հավակնում է դառնալ համայնքի ղեկավար: Սրբուհի Գրիգորյանի հետ այս տարիներին տարբեր առումներով՝ թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական, համագործակցել ենք:

– Դատելով մարզի որոշ համայնքներում տիրող իրավիճակից՝ կարող ենք արձանագրել, որ Աղասի Հակոբջանյանն ավագանու ապագա կազմում մերձավորների չի առանձնացնում, ավագանու մեջ թիմ չի փնտրում, ինչպես որոշ համայնքներում տեղի ունեցավ:

– Պատրաստ եմ աջակցել ավագանու յուրաքանչյուր անդամի՝ պայմանով՝ եթե կիրթ, գրագետ եւ փորձառու լինի: Նախորդ տարիներին համայնքի ավագանին գործել է այնպես, ինչպես պատկերացնում էի: Եթե քաղաքապետն իր դիրքում է, նա չի կարեւորում ավագանու անդամի ով լինելը, ապա ամեն ինչ ընթանում է բնականոն հունով: Կարեւորն ավագանու անդամի կրթությունն ու աշխատանքային փորձն է, աշխատելու կարողությունն ու պատրաստակամությունը:

> *Ուրախ եմ, որ ներկայիս ավագանու հինգ անդամ ցանկություն է հայտնել կրկին ընտրվելու: Այս չորս տարվա ընթացքում ավագանու հետ աշխատել ենք միայն օբյեկտիվության, անաչառության, գործող օրենքներին հավատարիմ մնալու սկզբունքով:*

– Հատկապես հոգեւոր-մշակութային ոլորտում հետաքրքիր ավանդույթներ եք ստեղծել: Կկարողանա՞ք ընտրվելու դեպքում դրանք պահպանել, շարունակել:

– Ոչ թե կարող ենք, այլ պիտի ավելացնենք, եւ համայնքի մշակութային զարգացումը հայտարարենք առաջնային գործ՝ շարունակելով նաեւ մեր նշանավոր համերկրացիների մեծարման, երիտասարդների հետ սերտ համագործակցության աշխատանքները, ինչը հնարավորություն կտա զարգացնել մատաղ սերնդի գեղագիտական, հոգեւոր-մշակութային դաստիարակությունը:

– Ո՞րն է Ձեր՝ Սիսիան համայնքի հետ կապված ամենամեծ մտահոգությունը:

– Համայնքում կան լուրջ հիմնահարցեր, որոնք հրատապ լուծում են պահանջում: Ինձ համար օր առաջ լուծում պահանջող հարցերից է Ֆիզկուլտուրնիկների 6 շենքի բնակիչների (40 ընտանիք) բնակարանի հարցը: Չորրորդ կարգի վթարային շենքի բնակիչներին ավագանու հերթական նիստի որոշմամբ կազատենք սպասարկման վճարից: Հաջորդ մտահոգությունս կապված է համայնքում աշխատատեղերի պակասի հետ: Հետագա գործունեության տարիներին պետք է նպաստենք դրանց ավելացմանը: Համայնքում շարունակում են գերակա մնալ փողոցների ասֆալտապատման, մայթերի

բարեկարգման, շենքերի տանիքների նորոգման եւ մի շարք այլ հարցեր:

– Իսկապե՞ս Սիսիանի երիտասարդությունը քաղաքապետի այլ պատկերացում ունի:

– Ես կասեի՝ ոչ. ինչ-որ խմբավորում, որ հեռու է համայնքային շահերն ընկալելուց եւ այդ մասին մտածելուց, դեռ ամբողջական երիտասարդություն չէ: Երիտասարդությունն ուսանողությունն է, երիտասարդ կադրերն են, որոնց հետ մշտապես համագործակցել եմ, ավանդական դարձրել նրանց հետ կապված շատ միջոցառումներ: Համոզված եմ՝ համայնքի երիտասարդության մեծամասնության համար նախընտրելի թեկնածու եմ:

– Կարծիք կա, որ Աղասի Հակոբջանյանի համար դժվար է հանրապետական գերատեսչությունների տեղական կառույցների հետ համագործակցելը. արդյո՞ք դա պայմանավորված է ՏԻՄ-ի մասին օրենքի որոշ անհստակություններով, գերատեսչական շահերի մրցակցությամբ, թե՞ անձնական հարաբերություններով:

– Որպես համայնքի ղեկավար, պետական պաշտոնյա՝ այդ կառույցների հետ շփվել եմ օրենքի շրջանակներում, ինձ տրված լիազորությունների սահմաններում: Ի՞նչ է՝ պետք է գնամ, ճաշեմ, համբուրվե՞մ պաշտոնյաների հետ, որ ասեն՝ նորմալ հարաբերություններ կան մեր միջեւ:

– Ձեր քաղաքական հակառակորդները հաճախ են նշում, որ քաղաքի ծայրամասերում աշխատանքներ չեն իրականացվում, ինչը խոչընդոտում է համայնքի համաչափ զարգացման ընթացքը:

– Նման կարծիք հայտնող մարդիկ հավանաբար համայնքի ծայրամասերում չեն եղել: Անցած տարիներին աշխատանքների մեծ մասն իրականացվել է ծայրամասերում. նորոգվել են տանիքներ, լուսավորվել փողոցներ, անհատական տների նրբանցքներ եւ այլն: Սիսիան-Մ-2 (Իշխանասարի խաչմերուկից) ճանապարհի հիմնանորոգման շնորհիվ որոշ թաղամասերի ասֆալտապատման հարցն էլ կլուծվի: Այնպես որ՝ ծայրամասերը մշտապես մեր ուշադրության կենտրոնում են եւ լինելու են մեր ուշադրության կենտրոնում:

– Սիսիան կատարած հերթական այցելության ժամանակ հաճելիորեն նկատեցինք, որ Սիսիանի մարզադահլիճի կառուցման աշխատանքները մոտենում են ավարտին: Ե՞րբ այն կհանձնվի վերջնական շահագործման՝ կահավորված վիճակով:

– Սիսիանում նմանատիպ մարզադահլիճ ունենալն իմ վաղեմի երազանքն էր, որ այսօր, կարծեք, իրականություն է դարձել: Կառուցման աշխատանքները սկսելու համար անհրաժեշտ էր համայնքային ներդրում, որ տեղական բյուջեի սուղ լինելու պատճառով հնարավոր չէր կատարել: Համայնքային ներդրման բաժինն իրականացրինք իմ եւ ընկերական շրջապատիս միջոցներով: Կառույցը դեռեւս նախորդ տարի պետք է շահագործեինք, բայց մարդկանց չարախոսության պատճառով ձգձգվեց. որոշ փաստաթղթային հարցեր առաջացան, որոնք հիմա արդեն լուծվել են: Կարող էինք մինչեւ ընտրություններն ավարտել, բայց չենք շտապում, որ ոմանք չչարախոսեն, թե նախընտրական վիճակով պայմանավորված ենք դա կատարում:

– Սիսիանի եւ ընդհանրապես շատ համայնքների խնդիրներից է նաեւ աղբավայրերի հարցը: Ինչպե՞ս կլուծվի այդ հարցը:

– Սիսիանի աղբավայրը գտնվում է Ույծի վարչական տարածքում, բայց կառավարության որոշումով այն օգտագործում է Սիսիան համայնքը: Առհասարակ աղբավայրերի բարելավման համար լուրջ ներդրումներ են անհրաժեշտ, որ համայնքը չունի: Բայց խոշորացված համայնքների աղբահանության կազմակերպման համար ծրագրի շրջանակներում Սիսիանի աղբավայրի տարածքում նույնպես հիմնավոր աշխատանքներ կիրականացվեն, որ զգալիորեն կբարելավի ստեղծված իրավիճակը:

– Ամիսներ առաջ հանրապետության վարչապետին Սիսիանից նամակ էին հղել, թե իբր մարզին հատկացված գումարները համաչափ չեն բաշխվում:

13 հոկտեմբերի 2015թ., ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ բացվեց Շաքե-Սիսիան-Տոլորս ճանապարհը

2014թ. Սիսիանը հռչակվեց ՀՀ առաջին երիտասարդական մայրաքաղաք

Դուք նույնպե՞ս նման կարծիք ունեք:

– Հավատացնում եմ՝ մարզին հատկացված գումարը բաշխվում է՝ գործի հրատապությունից ելնելով: Անկեղծ ասած, հնարավոր չէ, որ մարզպետ Սուրեն Խաչատրյանը կարեւորություն տա միայն մարզի որեւէ համայնքի զարգացմանը. գումարը բաշխվում է ըստ գործի առաջնայնության եւ կարեւորության: Մարզի համաչափ զարգացման վկայությունն են նաեւ Սիսիանում այսօր իրականացվող լայնածավալ ասֆալտապատման աշխատանքները, իսկ հրատապ խնդիրների լուծման համար նախատեսված գումարով կնորոգվեն տանիքներ, երաժշտական դպրոցը եւ այլն: Վարչապետի վերջին այցի ժամանակ տրված բոլոր խոստումներն արդեն իրականություն են: Բայց մեր ժողովուրդն ավելին է պահանջում:

– Պետական, միջազգային ի՞նչ ծրագրեր են իրականացվում Սիսիանում: Վերջին տարիներին ՀՀ կառավարությունն ինչ-որ հարցերի վերաբերյալ Սիսիանին առնչվող որոշումներ կայացրե՞լ է, թե՞ ոչ:

– Սիսիանի վերաբերյալ կոնկրետ որոշումներ չեն կայացվել, բայց երկրի զբոսաշրջության զարգացման ծրագրում ներառված է նաեւ ««Զորաց քարեր» բնակատեղի» պատմամշակութային արգելոցը, որ գտնվում է Սիսիանի վարչական տարածքում, սակայն պահպանությունը հանձնվել է մշակույթի նախարարությանը: Ի դեպ, Զորաց քարերի շնորհիվ բազում զբոսաշրջիկներ են այցելում Սիսիան:

> *Բոլորովին վերջերս ՅՈՒՆԵՍԿՕ-ի ուսումնառու քաղաքների համաշխարհային ցանցին անդամակցելու Սիսիան քաղաքի հայտը դրական եզրակացություն է ստացել: Սիսիանը Հայաստանի առաջին քաղաքներից է, որ անդամակցում է միջազգային այս հայտնի կառույցին: Դա հնարավորություն կտա մեր քաղաքացիներին ընդգրկվելու կազմակերպության կրթական եւ մշակութային ծրագրերում: Ավարտվող ընտրաշրջանում համագործակցել ենք միջազգային կառույցների հետ՝ տարբեր ծրագրերի շրջանակներում:*

– Նախընտրական շրջանում ակտիվացել են նաեւ Շաքեի ջրվեժի շուրջ խոսակցությունները:

– Շաքեի ջրվեժի գործարկումը բնավ քաղաքապետի եւ քաղաքապետարանի գործունեության հետ կապ չունի: Պետությունից գնվել է հէկը՝ որոշակի պայմաններով, որտեղ ջրվեժի մասին խոսք չկա: Վերջերս այդ հարցը կրկին արծարծվեց՝ բավականին կոպիտ արտահայտություններով շահարկելով իմ անունը: Հավատացնում եմ՝ այս ժամանակահատվածում ոչ մի զբոսաշրջիկի, այցելուի համար խոչընդոտ չենք հանդիսացել եւ կրելով զգալի նյութական վնասներ, կանգնեցնելով հէկի աշխատանքը՝ ջրվեժը բացել ենք, մինչդեռ, կրկնում եմ, պայմանագրով պարտավորված չենք դա անել: Ներկայումս բնապահպանության նախարարի, շահագրգիռ այլ կառույցների հետ այդ հարցի շուրջ բանակցություններ ենք վարում՝ վերջնական լուծման հասնելու համար: Բայց այս ողջ ժամանակահատվածում առաջնորդվել ենք միայն բարոյական արժեքներով՝ անհրաժեշտության դեպքում բացելով ջրվեժը եւ կրելով նյութական վնաս, որ մեզ համար երկրորդական է:

– Ապրիլյան պատերազմի օրերին Սիսիանը մեծ կորուստ ունեցավ: Հետաքրքրվո՞ւմ եք այդ օրերին զոհվածների ընտանիքների ճակատագրով:

– Ցավոք, Սիսիանի պանթեոնում շիրմաքարերի նոր շարք է առաջացել. ինը նահատակի շիրմաքարերն արդեն դրվել են: Նրանց ընտանիքներին փորձում ենք աջակցել հնարավորության սահմաններում, վերջերս Բելգիայի հայկական համայնքից նույնպես օգնություն ենք ստացել: Մշտապես հայտարարել եմ, որ պատրաստ եմ աջակցել թե՛ զոհվածների ընտանիքներին, թե՛ Արցախյան պատերազմի մասնակիցներին:

– Ձեր խոսքը սիսիանցի ընտրողներին, որոնց մի մասի կարծիքով ընտրությունների պատճառով համայնքում լարվածություն է առաջացել:

– Ես կասեի, որ սիսիանցի ընտրողը լարվածություն չունի, լարված են այն մարդիկ, ովքեր անձնական մտահոգություններ եւ հավակնություններ ունեն: Կոչ եմ անում հակասություն որոնողներին՝ մարդկանց չվախեցնել, վերադաս-ստորադաս հարաբերությունները չլարել, դրսից տղա չբերել: Իմ փորձը հուշում է, որ որոշ մարդիկ սխալ ուղի են բռնել: Իմ եւ թիմակիցներիս անունից երաշխավորում եմ՝ հակաօրինական, կեղտոտ տեխնոլոգիաներով, սպառնալիքներով ընտրություն չի լինի Սիսիանում:

– Չընտրվելու դեպքում կնեղանա՞ք սիսիանցիներից:

– Բացարձակ, ոչինչ հավերժ չի լինում, միայն կափսոսամ, որ Սիսիանի բարեկարգման հետագա աշխատանքները չեմ կարողանա իրականացնել: Միանշանակ չեմ նեղանա իմ համաքաղաքացիներից, բայց վստահ եմ, որ նրանք ինձ չեն նեղացնի, քանի որ ես իրենց չեմ նեղացրել եւ համաքաղաքացիներիս հետ եղել ու մնում եմ անկեղծ, ինչի համար եւ ակնկալում եմ նրանց վստահության քվեն:

Զրույցը՝ ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ՀԱՍՈ ՍԱՀՅԱՆ

Երբ Հայասպան են ասում

Երբ Հայասպան են ասում,
Երկնքի համ ու բույրից,
Ապրվածների համբույրից
Հարբում է հողը նորից,
Ու բարդիներն են նազում:

Երբ Հայասպան են ասում,
Նուռը ճչում է քարին,
Սարը կանչում է սարին,
Եվ բողբոջում է բարին,
Եվ չարիքն է նվազում:

Երբ Հայասպան են ասում,
Քարն արթնանում է քնից,
Միրուս թռնում է բնից,
Եվ կակաչները բլրից
Դեպի սարերն են վազում:

Երբ Հայասպան են ասում,
Ճաքում է նուռը կրքից,
Քրտնում է վազը դրկից,
Եվ ապրողները երկնքից
Ականջիդ բան են ասում...

Երբ Հայասպան են ասում,
Արմատներով զորացած,
Հնության մեջ խորացած,
Նորերի մեջ նորացած
Բերդ ու ոստան են ասում:

ԼՈՒՍԱՆՆԱՐ Հ. ՇԱՐԿՈՍՅԱՆԻ

Ուղղասար՝ ժայռապատկերների թանգարան բաց երկնքի տակ

Զորաց քարեր

Սիսիան

Որոտնաբերդի մատույցներում

Այունյաց երկիր
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ԱՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի): «ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:
® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1400, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 22.09.2016թ.:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ: